Luys Lույս®

# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ..... 1
   1.1. Արդյունաբերություն ..... 2
   1.2. Շինարարություն ..... 3
   1.3. Ծառայություններ ..... 4
   1.4. Առևտուր ..... 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ ..... 5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ..... 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ ..... 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ..... 9
   5.1. Բյուջեի եկամուտները ..... 9
   5.2. Բյուջեի ծախսերը ..... 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը ..... 12
   5.4. Պետական պարտք ..... 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ ..... 14
   6.1. Գնաճ ..... 14
   6.2. Ավանդներ ..... 15
   6.3. Վարկեր ..... 16
   6.4. Դրամական փոխանցումներ ..... 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ ..... 18

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարի՝ 2022 թվականին, տնտեսական աճի տեմպը սկսել էր կտրուկ արագանալ մայիս ամսից, երբ ՀՀ տնտեսության զարգացումներում սկսել էին արտացոլվել ռուս-ուկրաինական պատերազմի և ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետևանքով ՀՀ-ի համար առաջացած դրական զարգացումները: Հետևաբար, այս տարվա մայիսից նկատվում է տնտեսական աճի տեմպի որոշակի դանդաղում, որն ավելի զգալի է եղել հունիս և հուլիս ամիսներին, քանի որ համեմատվող տարվա ցուցանիշներում արդեն իսկ ներառված են դրական զարգացումներ ապահովող գործոնները: Օգոստոսին, այնուամենայնիվ, գրանցվել է տնտեսական աճի տեմպի արագացում, չնայած սպասվում էր, որ աճի տեմպը կշարունակի դանդաղել: Այսպես, օգոստոսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 10.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 4.9 տոկոսային կետով: Արդյունքում կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ը նախորդ ամսվա համեմատ մնացել է նույն մակարդակում:

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**




2023թ. հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 9.0 և 3.4 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը նվազել է նախորդ ամսվա համեմատ 0.1 տոկոսային կետով: Ընդ որում, այս պատկերը չի փոխվել նախորդ ամսվա համեմատ:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-օգոստոս ամիսներին, տոկոսային կետ**




## 1.1. Արդյունաբերություն

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**




**Արդյունաբերության ոլորտում մտահոգիչ զարգացումները շարունակվում են:** Արդյունաբերության ոլորտի զարգացումները բավական բացասական դինամիկա ունեն վերջին ամիսներին, ինչն արդեն մտահոգիչ է դարձել՝ հաշվի առնելով այս ոլորտի կարևորությունը տնտեսության ներուժի և երկարաժամկետ աճի տեսանկյունից: Մասնավորապես, արդյունաբերության ոլորտում արդեն երեք ամիս շարունակ գրանցվում է անկում, որը 2023թ. օգոստոսին կազմել է 3.7%: Հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը նույնպես մտել է բացասական տիրույթ՝ կազմելով -0.1%:

Արդյունաբերության հունվար-հուլիս[1] ամիսների 0.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 2.8% աճով (նախորդ ամսվա համեմատ այն դանդաղել է 1.5 տոկոսային կետով), որի նպաստումը կազմել է 1.7 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության ոլորտում շարունակվում է անկումը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Մասնավորապես, 2023թ. հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ գրանցվել է 4.1% անկում, իսկ հունիսին՝ անկումը կազմել էր 5.9%:

Հանքարդյունաբերության ոլորտում հունվար-հուլիս ամիսներին շարունակվել են անկման միտումները  նկազմել 5.9% (նախորդ ամսվա անկումը՝ 6.9%), իսկ անկման նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է  -1.4 տոկոսային կետ: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 0.2% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով զրոյական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 6.6% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության ոլորտի աճը շարունակում է մնալ բավական բարձր մակարդակում, սակայն նկատվում է փոքր չափով դանդաղման միտում:** Այսպես, օգոստոսին շինարարության աճը կազմել է 17.5%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, կուտակային աճը կայունացել է 17 տոկոսից բարձր մակարդակում՝ հունվար-օգոստոսին կազմելով 17.3%: Շինարարության ոլորտում բարձր աճերի պահպանումը

[1] Արդյունաբերության օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հիմնականում պայմանավորված է հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ:

### 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**




**Ծառայությունների ոլորտի աճի տեմպն էապես դանդաղելուց հետո՝ օգոստոսին որոշակիորեն վերականգնվել է:** Ծառայությունների ոլորտում օգոստոսին գրանցվել է 13.8% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 8.0 տոկոսային կետով, ինչն էլ առևտրի աճի հետ միասնին ապահովել է ՏԱՑ-ի արագացումը: Կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների աճը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 14.8%:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-հուլիս ամիսների տվյալների[2], աճին առավելապես՝ 9.0 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 52.7% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0 և 2.1 տոկոսային կետ: «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտում անկումը շարունակվել է նաև հուլիսին՝ գրանցելով 6.5% կուտակային անկում և 2.0 տոկոսային կետով հակազդելով ծառայությունների ճյուղի աճին:

[2] Ծառայությունների ոլորտի օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

### 1.4. Առևտուր

**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**




**Առևտրի աճի տեմպը նույնպես արագացել է:** Առևտրի աճի տեմպը 2023թ. օգոստոսին որոշակիորեն արագացել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 23.5% (արագանալով 3.1 տոկոսային կետով), սակայն շարունակում է ցածր մնալ մարտ-մայիս ամիսների աճերից, ինչը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով: Հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը մնացել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով 23.1%:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ[3], %**




**Արտահանման աճի տեմպը զգալիորեն դանդաղել է վերջին ամիսներին՝ պայմանավորված ինչպես բազայի էֆեկտով, այնպես էլ ՀՀ ապրանքների**

[3] Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

**գնային մրցունակության նվազմամբ:** 2023թ. օգոստոսին արտահանման աճը կազմել է 6.1%, ինչն էականորեն ցածր է հուլիսի աճից՝ արտացոլելով վերոհիշյալ գործոնների ազդեցությունները: Հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 51.8% և հունվար-հուլիսի աճից ցածր լինելով 10.9 տոկոսային կետով:

2023թ. հունվար-հուլիս ամիսների[4] արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 5.3, 10.3 և 1.9 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել է 23.5, 16.2 և 15.2 տոկոսային կետ: Արտահանման աճին բացասական նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, ինչպես նաև «բուսական ծագման արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 21.2%, 25.7% և 31.1% նվազումները:

Արտահանման աճի տեմպի շուրջ 10.7 տոկոսային կետով դանդաղումը առավելապես պայմանավորված է ընդհանուր արտահանմանը «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (շուրջ 5.1 տոկոսային կետով) և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (շուրջ 2.9 տոկոսային կետով) ապրանքախմբերի նպաստման չափի փոքրացմամբ, ինչն էլ պայմանավորված է վերջիններիս արտահանման ծավալների աճի տեմպի էական դանդաղմամբ: Կարևոր է նշել նաև, որ արտահանման աճի տեմպի դանդաղման գործում էական դեր ունի նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճի տեմպի դանդաղումը (հունվար-հունիսի 17.7%-ից հունվար-հուլիսին դարձել է 13.0%), որի նպաստումը նվազել է 1.0 տոկոսային կետով:

[4] Արտաքին առևտրի օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ[5], %**




**Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է և մնում է ցածր մակարդակում:** Ներմուծման ծավալների աճը 2023թ. օգոստոսին կազմել է 12.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 8.0 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը հունվար-հուլիսի համեմատ դանդաղել է շուրջ 9.2 տոկոսային կետով՝ կազմելով 53.8%:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-հուլիս ամիսներին[6] հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 22.6, 18.7 և 10.5 տոկոսային կետով: Վերջիններս էապես նվազել են նախորդ՝ հունվար-հունիս ամիսների ցուցանիշների նկատմամբ՝ պայմանավորելով ներմուծման աճի դանդաղումը:

## 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

**Անվանական աշխատավարձի աճի տեմպը դանդաղում է, սակայն դեռևս պահպանվում է բարձր մակարդակում:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 18.5%-ով (նախորդ

[5] Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:
[6] Արտաքին առևտրի օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:
[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ամսվա համեմատ դանդաղելով 1.0 տոկոսային կետով)՝ կազմելով 262,591.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 20.6%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.5 տոկոսային կետով)՝ կազմելով 290,140.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 9.3% տեմպով և կազմել 195,749.0 դրամ (պետական հատվածում աշխատավարձի աճի տեմպը նախորդ ամսվա համեմատ արագացել է 0.1 տոկոսային կետով):

**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-հուլիսին, %**




## 4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**









**ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը մեղմվում է, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ խորանում:** Հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 16.5%-ով, եվրոյի նկատմամբ՝ 15.7%-ով, որոնք փոքր-ինչ ցածր են հունվար-հուլիսի համապատասխանաբար 18.2% և 18.3%-ից: Միևնույն ժամանակահատվածում, ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակաբար արժևորվում է՝ հիմնականում պայմանավորված ՌԴ ռուբլու դիրքերի թուլացմամբ: Հունվար-օգոստոսի դրությամբ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորումը կազմել է 33.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 3.8 տոկոսային կետով: Վերջինս ավելի վտանգավոր է ՀՀ տնտեսության համար, քան դոլարի և եվրոյի նկատմամբ արժևորումը, քանի որ դեպի ՌԴ հիմնականում արտահանվում են վերջնական սպառման հայկական ապրանքներ, որոնց համար գնային մրցունակությունը էական նշանակություն ունի:

## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

### 5.1. Բյուջեի եկամուտները

**Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է:** Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. օգոստոսին աճել են 8.5%-ով, այն դեպքում, երբ հուլիսին եկամուտների աճի տեմպը եղել է բացասական՝ կազմելով -0.7%:

Բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ օգոստոսին կազմելով 8.5%, իսկ հունվար-օգոստոս ամիսների աճը կազմել է 15.5%՝ դանդաղելով 0.9 տոկոսային կետով: Հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է ընդհանուր տնտեսության ակտիվության տեմպի նվազմամբ:

**Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %**




Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 45.2%), ԱԱՀ-ի (աճը՝ 17.2%) և եկամտային հարկի (աճը՝ 16.6%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 6.2, 5.6 և 4.1 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերի 50.1% և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի 51.2% նվազումները, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 3.3 և 2.4 տոկոսային կետով:

**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

| | 2022թ. հունվար-օգոստոս | | 2023թ. հունվար-օգոստոս | |
|---|---|---|---|---|
| | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ |
| **Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք** | **25.2** | **25.2** | **15.5** | **15.5** |
| Ավելացված արժեքի հարկ | 21.6 | 7.3 | 17.2 | 5.6 |
| Ակցիզային հարկ | 13.5 | 0.9 | 15.4 | 0.9 |
| Շահութահարկ | 49.0 | 5.7 | 45.2 | 6.2 |
| Պետական տուրք | 230.7 | 5.7 | -50.1 | -3.3 |
| Մաքսատուրք | -34.4 | -1.9 | 33.1 | 1.0 |
| Բնապահպանական և բնօգտագործման վճարներ | 60.4 | 2.2 | -51.2 | -2.4 |
| Հաստատագրված վճարներ | | 0.0 | | 0.0 |
| Այլ հարկեր | 19.0 | 0.6 | 38.1 | 1.1 |
| Շրջանառության հարկ | 28.1 | 0.6 | 30.1 | 0.7 |
| Եկամտային հարկ | 8.7 | 2.5 | 16.6 | 4.1 |
| Սոցիալական վճարումներ | 46.1 | 1.3 | 44.4 | 1.5 |

## 5.2. Բյուջեի ծախսերը

**Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**



**Պետական բյուջեի ծախսերի աճը, ի տարբերություն եկամուտների, արագացել է:** Ընդհանուր ծախսերի աճը հունվար-օգոստոս ամիսներին կազմել է 13.7%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով: Ծախսերի աճին 10.3 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճել են ավելի արագ տեմպով՝ 29.2%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.4 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերի ծավալը կազմել է 189.3 մլրդ դրամ, որը ավելի քիչ է, քան 214.9 մլրդ դրամ կազմող՝ 2023թ. առաջին կիսամյակի պլանը:

## 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

**Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ**




**Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից:** ՀՀ պետական բյուջեի ծախսերն ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին ավելի փոքր են եղել, քան եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 71.6 մլրդ դրամի չափով՝ նախորդ տարվա 53.7 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ծախսերի փոքր լինելը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարողականի հետ կապված խնդիրներն ավելի են խորանում: Հարկ է նշել, որ առաջին կիսամյակում պլանավորվել էր ունենալ շուրջ 93 մլրդ դրամ պակասուրդ:

## 5.4. Պետական պարտք

**ՀՀ պետական պարտքի աճի տեմպը կայունացել է**: 2023թ. օգոստոսին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը կազմել է 14.0%: Իսկ դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 8.7%-ով:

Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճելով 14.7%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 9.4%-ով: Քանի որ զարգացումների այս պատկերի հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է, դիտարկելով դրամով արտահայտված ներքին պարտքը՝ նշենք, որ այն օգոստոսին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.5%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքն աճել է 5.9%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում փոքր-ինչ նվազել է՝ օգոստոսի վերջի դրությամբ կազմելով 43.9%:

**2023թ. օգոստոսին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է, ընդ որում, ձևավորվել է նախորդ տարվանից ավելի ցածր տոկոսադրույք:** Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. օգոստոսին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 10.4%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազումը կազմել է 0.1 տոկոսային կետ: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես նվազել է՝ նախորդ տարվա համեմատ 0.7 տոկոսային կետով:

Տոկոսադրույքների նվազման հիմքում ընկած ամենաէական գործոնը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տոկոսադրույքի նվազեցումն է:

**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**



# 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 6.1. Գնաճ

**Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %**




**2023թ. օգոստոսին գնաճը շարունակել է մնալ բացասական տիրույթում:** 2022 թվականին և 2023-ի սկզբին արձանագրված բարձր գնաճի տեմպը ընթացիկ տարվա մարտից սկսած կտրուկ դանդաղում է, իսկ հունիսից սկսած դիտվում է գնանկումային միջավայր: 2023թ. օգոստոսին 12-ամսյա գնաճը կազմել է -0.2%՝ զգալիորեն հեռու լինելով ՀՀ ԿԲ թիրախից: Գնաճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ներմուծված ապրանքների գների նվազմամբ, որտեղ իր դերն ունի նաև փոխարժեքի արժևորված մակարդակը: ՀՀ ԿԲ-ն, արձագանքելով գնաճային միջավայրի զարգացումներին, արդեն երեք անգամ (հունիսին, օգոստոսին և սեպտեմբերին) նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով:

## 6.2. Ավանդներ

**Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %**







**Ավանդների աճի տեմպը շարունակում է մնալ բարձր մակարդակում:** 2023թ. օգոստոսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալի աճի տեմպը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ կազմել է 25.1%՝ հուլիսի համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Ավանդների ծավալի բարձր աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 23.8% և 29.3%:

**Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ**




Ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերը՝ համապատասխանաբար

10.0 և 6.8 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 6.2 տոկոսային կետ:

## 6.3. Վարկեր[8]

**Վարկերի ծավալների աճի տեմպը շարունակում է էականորեն արագանալ:** ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 17.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով:

**Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**







Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 17.6% և 18.9%, իսկ նպաստումները՝ 16.7 և 1.0 տոկոսային կետ:

[8] Վարկերի վերաբերյալ օգոստոս ամսվա վիճակագրությունը՝ ըստ տնտեսության ոլորտների դեռևս չի հրապարակվել, այդ պատճառով սույն տեղեկանքում այդ տեղեկատվությունը ներառված չէ:

**Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**




Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.3 և 7.3 տոկոսային կետ: Ընդ որում, հատկանշական է, որ իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալների աճի տեմպը տարեսկզբին բացասական էր, սակայն վերջին ամիսներին մտել է դրական տիրույթ և էականորեն արագացել է՝ օգոստոսին հասնելով 14.2%-ի: Իրավաբանական անձանց վարկերի աճը հիմնականում արտացոլվում է ծառայությունների (հիմնականում՝ ֆինանսական և ապահովագրական գործունեություն), շինարարության և առևտրի ոլորտներում:

### 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 20. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[9]**




**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում**: 2023թ. հուլիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 133 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից: Հունվար-հուլիս ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 8.7%-ով: Ընդ որում, նվազումը հիմնականում պայմանավորված է արտահոսքի շուրջ 1.7 անգամ աճով, մինչդեռ ներհոսքը աճել է՝ շուրջ 35.5%-ով:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը որոշակիորեն արագացել է 2023թ. օգոստոսին՝ պայմանավորված ծառայությունների և առևտրի ոլորտների զարգացումներով:** 2023 թվականի առաջին ամիսներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպը պայմանավորված էր նախորդ տարվա սկզբին ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով ՀՀ տնտեսության համար առաջացած դրական գործոններով, որոնց ազդեցության չափը աստիճանաբար նվազում է: Սակայն, օգոստոսին արձանագրվել է ՏԱՑ-ի տեմպի արագացում, ինչը կարող է մի կողմից պայմանավորված լինել տուրիզմի աճի

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը (օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել)՝ ԱՄՆ դոլարով:

հետևանքով ծառայությունների և առևտրի աճով, կամ կարող է լինել միանգամյա գործոնների հետևանք: Այդ մասին կկարողանանք առավել հստակ դատողություն անել հաջորդ ամիս՝ սոցիալ-տնտեսական վիճակագրության հրապարակումից հետո:

**2. Արդյունաբերության ոլորտի զարգացումները առավել մտահոգիչ են դառնում:** Արդյունաբերության ոլորտում արդեն երեք ամիս շարունակ գրանցվում են անկման ցուցանիշներ: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս նախորդ՝ հունիս և հուլիս ամիսների ցուցանիշները, անկում է գրանցվում ոչ միայն հանքարդյունաբերության, այլև մշակող արդյունաբերության ոլորտներում, ինչը առավել վտանգավոր է: Այդ իրավիճակը խոսում է ՀՀ տնտեսության ներուժի և մրցունակության անկման մասին, որը պայմանավորված է նաև փոխարժեքի վարքագծի դրսևորումներով:

**3. Գնաճի տեմպը շարունակել է մնալ բացասական տիրույթում:** Երկար ժամանակահատված բարձր գնաճից հետո, հունիս-օգոստոս ամիսներին գրանցվել է գնանկում, որը բնականաբար էապես ցածր է ԿԲ թիրախից: Իրավիճակին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն արդեն ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը պետք է նպաստի տնտեսությունում ամբողջական պահանջարկի խթանմանը և գնաճի՝ դեպի թիրախին վերադարձին:

**4. Արտահանման աճի տեմպը զգալիորեն դանդաղել է վերջին ամիսներին, ինչը կարող է պայմանավորված լինել ՀՀ ապրանքների գնային մրցունակության նվազմամբ**: 2023թ. օգոստոսին արտահանման աճը կազմել է 6.1%, ինչն էականորեն ցածր է հուլիսի աճից: Հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 51.8% և հունվար-հուլիսի աճից ցածր լինելով 10.9 տոկոսային կետով: Կարևոր է նշել նաև, որ աճի տեմպի դանդաղման գործում էական դեր ունի նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճի տեմպի դանդաղումը (հունվար-հունիսի 17.7%-ից հունվար-հուլիսին դարձել է 13.0%), որի նպաստումը նվազել է 1.0 տոկոսային կետ:

**5. Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից:** Պետական բյուջեի պակասուրդը էապես շեղված է պլանավորված մակարդակից: Մասնավորապես, պլանավորված պակասուրդի փոխարեն արձանագրվում է էական բարձր հավելուրդ, ինչը պայմանավորված է նաև բյուջեի ծախսերի՝ հատկապես կապիտալ ծախսերի թերակատարմամբ: Այսպես, հունվար-օգոստոս ամիսներին իրականացվել է 189.3 մլրդ դրամ ծավալով կապիտալ ծախսեր, մինչդեռ բյուջեով հունվար-հունիսի պլանը կազմում է 214.9 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերի՝ տնտեսության ներուժի և երկարաժամկետ աճի

տեսանկյունից կարևորության մասին բազմիցս խոսվել է, սակայն դրանց կատարողականի խնդիրը շարունակում է արդիական մնալ:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*